

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՁՈՒՏ ԵԿԱՄՏԻ ՈՒ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ (ԳՆԵՐԻ) 2005 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Համար	N 879-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական հնկորպորացիա (03.12.2005-23.03.2006)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2005.07.20/46(418) Հող.883
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	30.12.2004
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	17.06.2005
Վավերացնող մարմին	ՀՀ Նախագահ
Վավերացման ամսաթիվ	06.07.2005
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	30.07.2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2004 թվականի N 879-Ն

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՉՈՒՏ ԵՎԱՍՏԻ ՈՒ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ (ԳՆԵՐԻ) 2005 ԹՎԱԿԱՆԻ ՉՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությանը և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հողի հարկի հաշվարկման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ու վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական և բնակավայրերի հողերի 2005 թվականի կադաստրային զուտ եկամտի և կադաստրային արժեքների չափեր սահմանել՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի (քաղաքների, քաղաքատիպ ավանների, գյուղերի) հողերի կադաստրային զուտ եկամտի և հողի կադաստրային արժեքի ժամանակավոր չափերի հաստատման մասին» N 462 որոշմամբ 1997 թվականի համար հաստատված բնակավայրերի հողերի կադաստրային զուտ եկամտի ու կադաստրային արժեքների (գների) չափերով.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի տվյալները հաստատելու մասին» N 237 որոշմամբ, ըստ գյուղական համայնքների և գնահատման շրջանների հաստատված տվյալների՝ տնամերձ և գյուղատնտեսական նշանակության հողերի զուտ եկամտի չափերով.

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս (մարզերի համար) գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված և անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման կարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված և անօգտագործելի հողերի կադաստրային արժեքների (գների) չափերով:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս գտնվող՝ պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերը, ինչպես նաև հողային ֆոնդի այլ նպատակային նշանակության հողերը՝ բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, օտարելու (ուղղակի կամ աճուրդով վաճառելու), վարձակալության իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում, այդ հողերի կադաստրային արժեքների (գների) 2005 թվականի չափերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N 1746-Ն որոշմամբ հաշվարկված բնակավայրերի հողերի գների չափերով՝ բացառությամբ սույն որոշման 4-րդ կետում նշված օբյեկտների ուղղակի վաճառքի դեպքերում:

3. Կասեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N1746-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետի գործողությունը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 6-ամսյա ժամկետով:

4. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 6-ամսյա ժամկետում սույն որոշման N 4 հավելվածով սահմանված ցանկում ներառված արտադրական նշանակության օբյեկտների, N 4 հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված կազմակերպությունների՝ նույն ցանկում չներառված դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, արտադրական նշանակության այլ օբյեկտների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում գտնվող գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնաշենքերի, թռչնանոցների, դեզանոցների, չորանոցների, սիլոսի հորերի, պահեստների, կերախոհանոցների, գյուղատնտեսական մեքենատրակտորային պարկերի կառուցման և սպասարկման համար հատկացված, բացառությամբ չկառուցապատված (առանձին միավոր

հանդիսացող) հողերի ուղղակի վաճառքի դեպքերում դրանց կադաստրային գների 2005 թվականի չափերը հաշվարկվում են սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներով՝ ըստ տարածագնահատման գոտիների (Երևան քաղաքում) և համայնքների (քաղաքային և գյուղական), սահմանված կադաստրային գների չափերով:

(4-րդ կետը լրաց. 13.10.05 N 1809-Լ)

5. Սահմանել Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս գտնվող՝ պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերն օտարելու (ուղղակի կամ աճուրդով վաճառելու), վարձակալության իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում, դրանց կադաստրային արժեքների (գների) 2005 թվականի չափերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի սվայները հաստատելու մասին» N 237 որոշմամբ հաստատված գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքների (զուտ եկամուտ x 25) չափերով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ դրանց նվազագույն վարձավճարի 2005 թվականի չափերը՝ նույն որոշմամբ հաստատված գյուղատնտեսական նշանակության հողերի զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

6. Սահմանել Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս գտնվող՝ պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող, 1997 թվականի հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությամբ (հողային հաշվեկշռով) հաստատված անօգտագործելի հողերն օտարելու (ուղղակի կամ աճուրդով վաճառելու), վարձակալության իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում, դրանց կադաստրային արժեքների (գների) 2005 թվականի չափերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս (մարզերի համար) գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված և անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման կարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված անօգտագործելի հողերի կադաստրային արժեքների (գների) չափերով:

7. Սահմանել, որ սույն որոշման 4-րդ կետում նշված NN 1, 2 և 3 հավելվածներով սահմանված կադաստրային գները և տարածագնահատման գոտիների նկարագիրը, ինչպես նաև սույն որոշման 3-րդ կետում նշված կասեցումը գործում են սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 6-ամսյա ժամկետով:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2005 թ. հունիսի 17
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2004 թվականի
դեկտեմբերի 30-ի N 879-Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

Տարածագնահատման գոտիներ	Կադաստրային գներ (դրամ/քմ)
1	2585
2	1982
3	1465
4	862
5	345

Երևան քաղաքի տարածագնահատման գոտիների նկարագիրը

I. Առաջին գոտու տարածքը սահմանվում է

1. Մաշտոցի պողոտայով՝ սկսած Իսակովի փողոցի հետ հատումից, Պարոնյան փողոցով, Լեոյի փողոցով, Մարշալ Բաղրամյան պողոտայով, Սարյան փողոցով, Իսահակյան փողոցով, Մաշտոցի պողոտայով մինչև վերջ, այնուհետև Կորյունի փողոցով, Աբովյան փողոցով մինչև վերջ՝ Ներառյալ Աբովյանի պուրակը, այնուհետև Կորյունի փողոցով, Նալբանդյան փողոցով, Խանջյան փողոցով, Ազաթանգեղոսի փողոցով /26 կոմիսարների/ փողոցով, Գրիգոր Լուսավորչի /Կարմիր բանակի/ փողոցով, Մաշտոցի պողոտայով, այդ թվում՝

- 1.1. Հանրապետության հրապարակ,
- 1.2. Շահումյանի անվան հրապարակ,
- 1.3. «Օղակաձև զբոսայգու» հատված՝ սկսած Մաշտոցի պողոտայից մինչև Նալբանդյան փողոց,
- 1.4. Մաշտոցի պողոտան ամբողջությամբ,
- 1.5. Տերյանի փողոցի հատված՝ սկսած Արամի /Սպանդարյան/ փողոցի հետ հատումից, մինչև Կորյունի /Կիրովի/ փողոցի հետ հատումը,
- 1.6. Չաքիյան փողոցն ամբողջությամբ,
- 1.7. Աբովյան փողոցի հատված՝ սկսած Հանրապետության հրապարակից, մինչև Կորյունի /Կիրովի/ փողոցի հատումը,
- 1.8. Կորյունի /Կիրովի/ փողոցն ամբողջությամբ,
- 1.9. Մոսկովյան փողոցն ամբողջությամբ,
- 1.10. Իսահակյան փողոցն ամբողջությամբ,
- 1.11. Թումանյան փողոցն ամբողջությամբ,
- 1.12. Վռամշապուհ Արքայի /Ամիրյան/ փողոցն ամբողջությամբ,
- 1.13. Նալբանդյան փողոցն ամբողջությամբ,
- 1.14. Խորենացու /Մարքսի/ փողոցի հատված՝ սկսած Մաշտոցի պողոտայի հետ հատումից, մինչև Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ փողոցի հետ հատումը,
- 1.15. Տիգրան Մեծի /Հոկտեմբերյան/ պողոտայի հատված՝ սկսած Հանրապետության հրապարակից մինչև Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ և Խանջյան փողոցների հետ հատումը,
- 1.16. Խորհրդարանի /Շահումյան/ փողոցի հատված՝ սկսած Հանրապետության հրապարակից մինչև Շահումյանի անվան հրապարակ,
- 1.17. Մարշալ Բաղրամյանի պողոտայի հատված՝ սկսած Մոսկովյան և Սարյան փողոցների հետ հատումից մինչև Իսահակյան փողոցի հետ հատումը՝ մի կողմից, և գրողների Միության շենքը՝ մյուս կողմից,
- 1.18. Սայաթ-Նովա պողոտայի հատված՝ սկսած Մոսկովյան, Սարյան փողոցների և Մարշալ Բաղրամյան պողոտայի հետ հատումից, մինչև Խանջյան փողոցի հետ հատումը,
- 1.19. Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ փողոցն ամբողջությամբ,
- 1.20. Խանջյան փողոցն ամբողջությամբ,
- 1.21. Լեոյի փողոցն ամբողջությամբ,
- 1.22. Գրիգոր Լուսավորչի /Կարմիր բանակի/ փողոցն ամբողջությամբ,
- 1.23. Պարոնյան փողոցի հատված՝ սկսած Մաշտոցի պողոտայի հետ հատումից մինչև Լեոյի փողոցի հետ հատումը,
- 1.24. Տերյան փողոցի հատված՝ սկսած Կորյունի /Կիրովի/ փողոցի հետ հատումից մինչև վերջ,
- 1.25. Աբովյան փողոցի հատված՝ սկսած Կորյունի /Կիրովի/ փողոցի հետ հատումից մինչև վերջ՝ Ներառյալ Աբովյանի պուրակը,
- 1.26. Սարյան փողոցն ամբողջությամբ:

II. Երկրորդ գոտու տարածքը սահմանվում է

2. Երկրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին գոտու տարածքը սահմանագծող փողոցների հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝

Իսակովի փողոցով, Հրազդան գետով մինչև Կիևյան կամրջի տակ, այնուհետև Կիևյան կամրջով, Կիևյան փողոցով, «Բարեկամության» մետրոյի կայարանամերձ հրապարակով, Սիամանթոյի /Կասյան/ փողոցով, Կոմիտասի պողոտայով, Ազատության պողոտայով, Սարալանջի /Կոմերիտական խճ./ փողոցով, շրջանցելով Աբովյան պուրակը, այնուհետև Հերացու փողոցով, Չարենցի փողոցով, Նար-Դոսի փողոցով, Խորենացու /Մարքսի/ փողոցով, Բրիտապիորի /Գորկու/ փողոցով, Արշակունյաց /Օրջոնիկիձեի/ պողոտայով:

Երկրորդ գոտի են համարվում

- 2.1. «Սասունցի Դավիթ» կայարանամերձ հրապարակի տարածքը,
- 2.2. «Գարեգին Նժդեհի» հրապարակի տարածքը,
- 2.3. «Բարեկամություն» մետրոյի կայարանամերձ հրապարակի տարածքը,
- 2.4. «Բարեկամություն» զբոսայգու տարածքը,
- 2.5. Արշակունյաց /Օրջոնիկիձեի/ պողոտայի հատված՝ սկսած Գրիգոր Լուսավորչի /Կարմիր բանակի/ և Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ փողոցների հետ հատումից, մինչև Բրիտապիորի /Գորկու/ փողոցի հետ հատումը,

2.6. Քրիստափորի /Գորկու/ փողոցի հատված՝ սկսած Արշակունյաց /Օրջոնիկիձեի/ պողոտայի հետ հատումից, մինչև Խորենացու /Մարքսի/ փողոցի հետ հատումը,

2.7. Տիգրան Մեծի /Հոկտեմբերյան/ պողոտայի հատված՝ սկսած Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ և Խանջյան փողոցների հատումից, մինչև Քրիստափորի /Գորկու/ փողոցի հետ հատումը,

2.8. Խորենացու /Մարքսի/ փողոցի հատված՝ սկսած Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ փողոցի հետ հատումը, մինչև Քրիստափորի /Գորկու/ փողոցի հետ հատումը,

2.9. Նար-Դոսի փողոցն ամբողջությամբ,

2.10. Վարդանանց /Կոնյայի/ փողոցի հատված՝ սկսած Խանջյան փողոցի հետ հատումից, մինչև Նար-Դոսի փողոցի հետ հատումը,

2.11. «Օղակաձև զբոսայգու» տարածքում՝ բացառությամբ 1.3 կետում նշված հատվածից,

2.12. Չարենցի փողոցն ամբողջությամբ,

2.13. Ալեք Մանուկյան /Մռավյան/ փողոցն ամբողջությամբ,

2.14. Ազատության պողոտայի հատված՝ սկսած Սարալանջի /Կոմերիտական խճ./ փողոցի հետ հատումից, մինչև Կոմիտասի պողոտայի և Դավիթ Անհաղթի փողոցների հետ հատումը /Ներառյալ սույն խաչմերուկը/,

2.15. Կոմիտասի պողոտան ամբողջությամբ,

2.16. Սիամանթոյի /Կասյան/ փողոցն ամբողջությամբ,

2.17. Մարշալ Բաղրամյան պողոտայի հատված՝ սկսած Իսահակյան փողոցի հետ հատումից և գրողների Միության շենքը, մյուս կողմից մինչև «Բարեկամություն» մետրոյի կայարանամերձ հրապարակ,

2.18. Կիևյան փողոցն ամբողջությամբ,

2.19. Պռոշյան փողոցն ամբողջությամբ,

2.20. Պարոնյան փողոցի հատված՝ սկսած Լեոյի փողոցի հետ հատումից, մինչև Պռոշյան փողոցի հետ հատումը,

2.21. Հր. Քոչար փողոցի հատված՝ սկսած «Բարեկամություն» մետրոյի կայարանամերձ հրապարակից մինչև Վ. Փափազյան փողոցի հետ հատումը,

2.22. «Նորք» թաղամասը,

2.23. Գրիգոր Լուսավորչի և Ծովակալ Իսակովի փողոցների հատման կետից, Գրիգոր Լուսավորչի փողոցով, Արշակունյաց պողոտայով, Արշակունյաց 1-ին փակուղով, Արտաշատի ջրանցքով, Ծովակալ Իսակովի փողոցով պարփակված տարածքը:

(2-րդ կետը լրաց., փոփ. 13.10.05 N 1809-Ն)

III. Երրորդ գոտու տարածքը սահմանվում է

3. Տիգրան Մեծի /Հոկտեմբերյան/ պողոտայով՝ սկսած Քրիստափորի /Գորկու/ փողոցի հետ հատումից, Ռոստոմյան փողոցով, Դավիթ Բեկի /Խորենացու/ փողոցով, Սովետաշենի փողոցով, Խորենացու /Մարքսի/ փողոցով, Քրիստափորի /Գորկու/ փողոցով, Տիգրան Մեծի /Հոկտեմբերյան/ պողոտայով սահմանված տարածքը,

3.1. Արշակունյաց /Օրջոնիկիձեի/ պողոտայի հատված՝ սկսած Գրիգոր Լուսավորչի /Կարմիր բանակի/ և Ազաթանգեղոսի /26 կոմիսարների/ փողոցների հետ հատումից, Բագրատունյաց /Թամանցիների/ պողոտայով, ծովակալ Իսակովի պողոտայով, Էջմիածնի հին խճուղով, Իսակովի փողոցով, Գրիգոր Լուսավորչի /Կարմիր բանակի/ փողոցով, Արշակունյաց /Օրջոնիկիձեի/ պողոտայով սահմանված տարածքը, բացառությամբ 2.23-րդ կետում նշված տարածքի,

3.2. Ազատության պողոտայով՝ սկսած Բաբայան փողոցի հետ հատումից, Չ. Զանաքեռցու /Կամոյի/ փողոցով, գերեզմանատան մոտով, երկաթուղիով, Ռուբինյաց /Դեկաբրիստների/ փողոցով, Դավիթ Անհաղթի փողոցով, Կարապետ Ուլսեցու /Չափարիձեի/ փողոցով, Բաբայան փողոցով, Ազատության պողոտայով սահմանագծված տարածքը,

3.3. Աջափնյակ թաղամասը (մասամբ)՝ սահմանագծված հետևյալ փողոցներով՝ Լենինգրադյան փողոցով, Հալաբյան փողոցով, Մարգարյան փողոցով, Բաշինջաղյան փողոցով, Մազմանյան փողոցով, Շիրազի փողոցով, Լենինականի փողոցով, Լենինգրադյան փողոցով, ինչպես նաև թաղամասին հարող Թումանյանի անվան զբոսայգին և Ֆիզիկայի ինստիտուտի տարածքը՝ ներառյալ բնակելի շենքերը,

3.4. Նորքի 1, 2, 3, 4 զանգվածները,

Երրորդ գոտի են համարվում նաև՝

3.5. «Հաղթանակ» զբոսայգու տարածքը,

3.6. Մյասնիկյան պողոտան ամբողջությամբ,

3.7. Գայի պողոտայի հատվածը՝ սկսած Ավան-Չեյթուն-Նորքի զանգված ճյուղավորման կամրջից մինչև Սաֆարյան փողոցի հետ հատումը,

3.8. Աճառյան փողոցի հատված, սկզբից մինչև Բաբաջանյան փողոցի հետ հատումը,

3.9. Տիգրան Մեծի /Հոկտեմբերյան/ պողոտայի հատված՝ սկսած Քրիստափորի /Գորկու/ փողոցի հետ հատումից մինչև վերջ,

3.10. Արցախի /Բաքվի/ փողոցի հատված՝ սկսած Սասունցի Դավիթ կայարանամերձ հրապարակից մինչև Էրեբունու փողոցի հետ հատումը,

3.11. Քրիստափորի /Գորկու/ փողոցի հատված՝ սկսած Մ. Խորենացու /Մարքսի/ փողոցի հետ հատումից մինչև վերջ,

3.12. Գարեգին Նժդեհի /Կալինինի/ փողոցի հատված՝ սկսած Գարեգին Նժդեհի

/Սպանդարյան/ հրապարակից մինչև վերջ,

3.13. Բագրատունյաց պողոտան ամբողջությամբ /Նախկին Թամանցիների փողոցի հատված՝ սկսած Շահումյանի կամրջից մինչև երկաթգիծ/,

3.14. Արշակունյաց /Օրջոնիկիձեղի/ պողոտայի հատված՝ սկսած Զրիստափորի /Գորկու/ փողոցի հետ հատումից, մինչև Ն. Շենգավիթի 12-րդ փողոցի հետ հատումը,

3.15. Ծովակալ Իսակովի պողոտայի հատված՝ սկսած «Հաղթանակ» կամրջից մինչև Շահումյան կամուրջը,

3.16. Սեբաստիայի փողոցն ամբողջությամբ,

3.17. Գևորգ Չաուշի փողոցն ամբողջությամբ,

3.18. Էրեբունի փողոցի հատված՝ սկսած Արցախի /Բաքվի/ փողոցի հետ հատումից մինչև Նոր-Արեշի 22-րդ փողոցի հետ հատումը,

3.19. Խորենացու(Մարքսի) փողոցի հատված՝ սկսած Զրիստափորի (Գորկու) փողոցի հետ հատումից մինչև վերջ,

3.20. Ռոստոմյան և Սասունցի Դավթի (Մայակովսկու) փողոցներն ամբողջությամբ,

3.21. Դավիթ Անհաղթի փողոցն ամբողջությամբ,

3.22. Սևակի փողոցի հատված՝ սկսած Դրոյի /Փարիզյան Կոմունայի/ փողոցի հետ հատումից մինչև Ռուբինյանց /Դեկաբրիստների/ փողոցի հետ հատումը,

3.23. Բաբայան փողոցի հատված՝ սկսած Ազատության պողոտայի հետ հատումից մինչև վերջ,

3.24. Ազատության պողոտայի հատված՝ սկսած Դավիթ Անհաղթի փողոցի հետ հատումից մինչև վերջ /մինչև Թբիլիսյան խճ./

3.25. Լենինգրադյան փողոցն ամբողջությամբ,

3.26. Մարգարյան փողոցն ամբողջությամբ,

3.27. Հալաբյան փողոցի հատված, սկսած Լենինգրադյան փողոցի հետ հատումից, մինչև Մարգարյան փողոցի հետ հատումը,

3.28. Շիրազի և Լենինականի փողոցներն ամբողջությամբ /սկսած Սեբաստիայի փողոցի հետ հատումից, մինչև Գևորգ Չաուշի փողոցի հետ հատումը/,

3.29. Դավիթ Բեկի /խորենացու/ փողոցն ամբողջությամբ,

3.30. Սովետաշենի փողոցի հատված՝ սկսած Սասունցի Դավթի /Մայակովսկու/ և Խորենացու /Մարքսի/ փողոցի հետ հատումից, մինչև Դավիթ Բեկի /խորենացու/ փողոցի հետ հատումը,

3.31. Էջմիածնի խճուղին ամբողջությամբ,

3.32. Չ. Զանաքեռցու /Կամոյի/ փողոցը,

3.33. Ռուբինյանց /Դեկաբրիստների/ փողոցն ամբողջությամբ,

3.34. Կարապետ Ուլնեցու /Ջափարիձեղի/ փողոցն ամբողջությամբ,

3.35. Բաշինջադյան փողոցը,

3.36. Ռոստոմի (Խմելնիցկու) փողոցի հատված, սկսած Նար-Դոսի փողոցի հետ հատումից մինչև վերջ,

3.37. «Նորագյուղ» թաղամասը,

3.38. «Նոր Կիլիկիա» թաղամասը,

3.39. Թբիլիսյան խճուղին ամբողջությամբ,

3.40. «Նորը-Մարաշ» թաղամասը,

3.41. Բարբյուսի, Զեռու (Շչորսի), Ս. Մախասայանց (Պրավդայի), Մամիկոնյանց (Ֆուրմանովի), Գրիբոյեդովի, Ադոնցի (Գվարդիականների) փողոցներով, Ազատության, Կոմիտասի պողոտաներով, Կասյան, Կիւյան, Բարբյուսի փողոցներով սահմանագծված տարածքները:

(3-րդ կետը լրաց., փոփ., խմբ. 13.10.05 N 1809-Ն)

IV. Չորրորդ գոտու տարածքը սահմանվում է

4. Չորրորդ գոտու համար սահմանվում են այն տարածքները, որոնք գտնվում են հետևյալ հրապարակների, պողոտաների և փողոցների, վերջիններիս հատվածների վրա՝

4.1. Կոմիտասի անվան զբոսայգու տարածքում,

4.2. Բաֆֆու փողոցի հատված՝ սկսած Սեբաստիայի փողոցի հետ հատումից, մինչև Մխիթար Գոշի փողոցի հատումը,

4.3. Հալաբյան փողոցի հատված՝ սկսած Մարգարյան փողոցի հետ հատումից մինչև վերջ,

4.4. Աշտարակի խճուղին ամբողջությամբ,

4.5. Իսակովի պողոտայի հատված՝ սկսած Շահումյանի կամրջից մինչև վերջ,

4.6. Շիրազի փողոցի ձախակողմյան տարածքի 120 մ լայնությամբ շերտը Ջանիբեկյան փողոցի հետ հատումից մինչև Գևորգ Չաուշի փողոցի հետ հատումը,

4.7. Աճառյան փողոցի հատված՝ սկսած Բաբաջանյան փողոցի հետ հատումից մինչև վերջ,

4.8. Գայի պողոտայի հատված՝ սկսած Սաֆարյան փողոցի հետ հատումից մինչև Դրոյի հրապարակ,

4.9. Էրեբունի փողոցի հատված՝ սկսած Նոր-Արեշ 22-րդ փողոցի հետ հատումից մինչև վերջ,

4.10. Թամանցիների փողոց՝ սկսած երկաթգծից մինչև վերջ,

4.11. Ծերեթելու փողոցի հատված՝ սկսած Արագածի և Թամանցիների փողոցների հատումից, մինչև Շիրակի փողոցի հետ հատումը,

4.12. «Ծիծեռնակաբերդ» այգին՝ ներառյալ Մարգահամերգային համալիրը և նրանց

- հարակից Հրազդանի կիրճի տարածքը,
 4.13. «Սարի թաղ» թաղամասում,
 4.14. «Նոր Արաբկիր» թաղամասում,

- 4.15. Քանաքեռ թաղամասում,
 4.16. Ավան-Առինջ թաղամասում,
 4.17. Նորքի 5 և 6-րդ զանգվածներում,
 4.18. Նոր Արեշ թաղամասում,
 4.19. Նոր Մալաթիա թաղամասում,
 4.20. 11-րդ և 15-րդ թաղամասում,
 4.21. «Արարատյան» զանգվածում:

(4-րդ կետը խմբ., փոփ., լրաց.13.10.05 N 1809-Ն)

V. Հինգերորդ գոտու տարածքը սահմանվում է

5. Հինգերորդ գոտու համար սահմանվում են այն տարածքները, որոնք գտնվում են հետևյալ փողոցների և տարածքների վրա՝

- 5.1. «Վարդավառ» /կոմերիտական/ զբոսայգու տարածքում,
 5.2. «Էրեբունի» օդանավակայանի տարածքում,
 5.3. Շիրազի փողոցի ձախակողմյան տարածքի 120 մ լայնությամբ շերտից դեպի Սիլիկյան թաղամաս ընկած տարածքը,
 5.4. Աճառյան փողոցի հատվածը, Ծարավ Աղբյուրի փողոցի հետ հատումից մինչև վերջ, Աճառյան և Ծարավ Աղբյուրի փողոցներով պարփակված տարածքը,
 5.5. Գյուլիքեխվյան և Թևոսյան փողոցների միջև ընկած տարածքը («Ջրվեժ» արդյունաբերական հանգույցի հատվածներից մեկը),
 5.6. Արին-Բերդի և Թեյշեբայինի փողոցների միջև ընկած տարածքը
 5.7. Վերին Չարբախ թաղամասում,
 5.8. 16-րդ թաղամասում,
 5.9. **(5.9. կետը հանվել է 13.10.05 N 1809-Ն)**
 5.10. Հարավ-Արևմտյան թաղամասում,
 5.11. **(5.11 կետը հանվել է 13.10.05 N 1809-Ն)**
 5.12. **(5.12 կետը հանվել է 13.10.05 N 1809-Ն)**
 5.13. **(5.13 կետը հանվել է 13.10.05 N 1809-Ն)**
 5.14. **(5.14 կետը հանվել է 13.10.05 N 1809-Ն)**
 5.15. **(5.15 կետը հանվել է 13.10.05 N 1809-Ն)**
 5.16. Նորքի 7, 8 և 9-րդ զանգվածներում,
 5.17. Դավթաշեն զանգվածում,
 5.18. Սիլիկյան /Սպանդարյան/ թաղամասում,
 5.19. Հաղթանակ թաղամասում,
 5.20. Ներքին Չարբախ թաղամասում,
 5.21. Կարմիր Բլուր թաղամասում,
 5.22. Նորագավիթ թաղամասում,
 5.23. Վերին Ջրաշեն թաղամասում,
 5.24. Վարդաշեն թաղամասում,
 5.25. Ավան թաղամասում,
 5.26. Սովետաշեն թաղամասում,
 5.27. Ջրվեժ թաղամասում:

(5-րդ կետը խմբ., փոփ. 13.10.05 N 1809-Ն)

**Հայաստանի Հանրապետության
 կառավարության աշխատակազմի
 ղեկավար-նախարար**

Մ. Թոփուզյան

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2004 թվականի
 դեկտեմբերի 30-ի N 879-Ն որոշման

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
 ՆՇԱՆԱՎՈՒԹՅԱՆ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՃՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
 ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ
 ՎԱՃԱՌՔԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

NN ը/կ	Քաղաքային համայնքներ	Կադաստրային գինը (դրամ/քմ)	NN ը/կ	Քաղաքային համայնքներ	Կադաստրային գինը (դրամ/քմ)
1.	քաղ. Վաղարշապատ	625	25.	քաղ. Իջևան	187
2.	քաղ. Աշտարակ	562	26.	քաղ. Գավառ	125

3.	քաղ. Արույան	562	27.	քաղ. Վարդենիս	125
4.	քաղ. Եղվարդ	562	28.	քաղ. Մարտունի	125
5.	քաղ. Մասիս	500	29.	քաղ. Ճամբարակ	125
6.	քաղ. Բյուրեղավան	500	30.	քաղ. Թալին	125
7.	քաղ. Նոր Հաճն	500	31.	քաղ. Տաշիր	125
8.	քաղ. Գյումրի	500	32.	քաղ. Սիսիան	125
9.	քաղ. Վանաձոր	437	33.	քաղ. Մեղրի	125
10.	քաղ. Դիլիջան	437	34.	քաղ. Բերդ	125
11.	քաղ. Ջերմուկ	375	35.	քաղ. Նոյեմբերյան	125
12.	քաղ. Արտաշատ	312	36.	քաղ. Վայք	125
13.	քաղ. Արմավիր	312	37.	քաղ. Եղեգնաձոր	125
14.	քաղ. Հրազդան	312	38.	քաղ. Մարալիկ	125
15.	քաղ. Ծաղկաձոր	312	39.	քաղ. Թումանյան	76
16.	քաղ. Ապարան	250	40.	քաղ. Ախթալա	68
17.	քաղ. Արարատ	250	41.	քաղ. Շամլուղ	68
18.	քաղ. Վեդի	250	42.	քաղ. Սպիտակ	62
19.	քաղ. Չարենցավան	250	43.	քաղ. Արթիկ	62
20.	քաղ. Սևան	187	44.	քաղ. Դաստակերտ	48
21.	քաղ. Ալավերդի	187	45.	քաղ. Ագարակ	26
22.	քաղ. Ստեփանավան	187	46.	քաղ. Մեծամոր	25
23.	քաղ. Գորիս	187	47.	քաղ. Զաջարան	12
24.	քաղ. Կապան	187			

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թոփուզյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2004 թվականի
դեկտեմբերի 30-ի N 879-Ն որոշման

**ԱՐԳԱՑՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՍՆԱԿՈՐԵՑՎԱԾ ԿԱՍ ՄԱՍՆԱԿՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՂԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)	N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)
1.	Ափնագյուղ	53	40.	Կարբի	25
2.	Արա	53	41.	Կոշ	25
3.	Արագած (Ապար. շրջ.)	53	42.	Դազարավան	25
4.	Թթուջուղ	53	43.	Փարպի	25
5.	Ջրամբար	53	44.	Շամիրամ	25
6.	Չքնաղ	53	45.	Նոր Ամանոս	25
7.	Հարթավան	53	46.	Նոր Եղեսիա	25
8.	Սարալանջ	53	47.	Օրգով	33
9.	Լուսագյուղ	53	48.	Օհանավան	25

10.	Վարդենուտ	53	49.	Օշական	25
11.	Վարդենիս	53	50.	Բարոժ	25
12.	Ծաղկաշեն	53	51.	Բայսյզ	33
13.	Չորագլուխ	53	52.	Դավթաշեն	25
14.	Քուչակ	53	53.	Դաշտադեմ	25
15.	Սուլքի	53	54.	Դիան	33
16.	Երնջատափ	53	55.	Գետափ	25
17.	Եղիպատրուշ	53	56.	Գառնահովիտ	33
18.	Շենավան	53	57.	Գյալթո	25
19.	Նորաշեն (Ապար. շրջ.)	53	58.	Չարինջա	33
20.	Նիգավան	53	59.	Չովասար	33
21.	Բազմաղբյուր	25	60.	Ագարակ (Թալ. շրջ.)	25
22.	Բյուրական	25	61.	Ավթոնա	33
23.	Դպրեվանք	25	62.	Ակունք	33
24.	Ագարակ (Աշտ. շրջ.)	25	63.	Արեգ	33
25.	Ավան	33	64.	Արագած (Թալ. շրջ.)	25
26.	Արագածոտն	25	65.	Արտենի	25
27.	Արուն	25	66.	Աշնակ	25
28.	Արտաշավան	33	67.	Պարտիզակ	25
29.	Աղծք	25	68.	Թլիկ	25
30.	Անտառուտ	33	69.	Ոսկեթաս	33
31.	Ոսկեվազ	25	70.	Իրինդ	33
32.	Ոսկեհատ	25	71.	Հակկո	25
33.	Ուջան	25	72.	Հացաշեն	33
34.	Ուշի	25	73.	Սորիկ	25
35.	Լեռնարոտ	33	74.	Սուսեր	33
36.	Սասունիկ	25	75.	Լուսակն	25
37.	Սաղմոսավան	33	76.	Վ.Բազմաբերդ	25
38.	Վ. Սասունիկ	33	77.	Վ.Սասունաշեն	33
39.	Տեղեր	33	78.	Կաթնաղբյուր	33
79.	Կարմրաշեն	33	96.	Ավշեն	53
80.	Ծաղկասար	33	97.	Ամրե թագա	53
81.	Կաքավաձոր	33	98.	Ջամշուլ	53
82.	Ղաբաղթափա	25	99.	Հնաբերդ	53
83.	Սաստարա	33	100.	Լեռնապար	53
84.	Ցամաքասար	33	101.	Սանգյառ	53
85.	Եղնիկ	33	102.	Սիփան	53
86.	Շղարշիկ	33	103.	Ոյա թագա	53
87.	Ն.Բազմաբերդ	25	104.	Վարդաբլուր	53
88.	Ն.Սասունաշեն	25	105.	Ծաղկահովիտ	25
89.	Նոր Արթիկ	25	106.	Ծիլքար	53
90.	Բերքառատ	53	107.	Մելիքգյուղ	53
91.	Դերեկ	53	108.	Միրաք	53
92.	Գեղադիր	53	109.	Շենկանի	53
93.	Գեղարոտ	53	110.	Նորաշեն (Ծաղկահ. շրջ.)	53
94.	Գեղաձոր	53	111.	Օրթաճյա	53
95.	Ալագյազ	25			

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱՎՈՒԹՅԱՆ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ
ՎԱՃԱՌԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)	N		Կադաստրային գները (դրամ/քմ)
				Գյուղական համայնքներ	
1.	Բերդիկ	25	48.	Ոսկետափ	77
2.	Բերքանուշ	77	49.	Ուրցալանջ	25
3.	Բարձրաշեն	25	50.	Ուրցաձոր	22
4.	Բաղրամյան	77	51.	Լանջառ	25
5.	Բուռաստան	77	52.	Լանջանիստ	25

6.	Բյուրավան	77	53.	Լուսառատ	77
7.	Դեղծուտ	25	54.	Լուսաշող	25
8.	Դալար	77	55.	Սուրենավան	22
9.	Դիտակ	25	56.	Սիսավան	25
10.	Դիմիտրով	77	57.	Վեդու Գ/Գ բանավան	25
11.	Դվին	25	58.	Տափերական	77
12.	Գետազատ	25	59.	Վարդաշատ	25
13.	Աբովյան	25	60.	Վանաշեն	22
14.	Ազատավան	77	61.	Փոքր Վեդի	77
15.	Արևշատ	25	62.	Երասխ	22
16.	Արաքսավան	77	63.	Եղեգնավան	77
17.	Այգեգարդ	25	64.	Շաղափ	25
18.	Այգեպատ	77	65.	Լոր ուղի	77
19.	Այգեստան	25	66.	Լոր կյանք	77
20.	Ոստան	77	67.	Լոյակերտ	77
21.	Ջրաշեն	25	68.	Դարբնիկ	77
22.	Հովտաշեն	77	69.	Դարակերտ	77
23.	Հնաբերդ	25	70.	Դաշտավան	77
24.	Լանջազատ	25	71.	Գետափնյա	77
25.	Վերին Դվին	25	72.	Գեղանիստ	77
26.	Վ. Արտաշատ	25	73.	Չորակ	77
27.	Վարդաշեն	25	74.	Ազատաշեն	77
28.	Կանաչուտ	77	75.	Արևաբույր	77
29.	Մասիս գ.	77	76.	Արբաթ	77
30.	Քաղցրաշեն	25	77.	Արգավանդ	77
31.	Մխչյան	77	78.	Այնթապ	77
32.	Մրգավետ	25	79.	Ջրահովիտ	25
33.	Մրգավան	77	80.	Հայանիստ	77
34.	Մրգանուշ	25	81.	Հովտաշատ	77
35.	Շահումյան	77	82.	Խաչփառ	77
36.	Նարեկ	25	83.	Սայաթ-Նովա	77
37.	Նորաշեն	25	84.	Ռանչպար	77
38.	Նշավան	77	85.	Սիփանիկ	77
39.	Դաշտաքար	22	86.	Սիս	77
40.	Գոռավան	22	87.	Մարմարաշեն	77
41.	Չանգակատուն	25	88.	Ղուկասավան	77
42.	Ավշար	77	89.	Լոր Խարբերդ	25
43.	Արալեզ	77	90.	Լոր Կյուրին	25
44.	Արարատ գ.	77	91.	Լորաբաց	77
45.	Արմաշ	22	92.	Լորամարգ	77
46.	Այգավան	77	93.	Լիզամի	77
47.	Պարույր Սևակ	22			

**ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱՎՈՐԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ` ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՂԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌԷԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)	N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)
1.	Բագարան	25	48.	Լոր Արտագես	77
2.	Բաղրամյան (Բաղր. շրջ.)	250	49.	Լոր Արմավիր	77
3.	Դալարիկ	25	50.	Լոր Կեսարիա	25
4.	Արևադաշտ	25	51.	Լորապատ	77
5.	Արգինա	25	52.	Լորավան	25
6.	Արտամետ	25	53.	Բաղրամյան (Էջմ. շրջ.)	25
7.	Հուշակերտ	25	54.	Դաշտ	25
8.	Լեռնագոգ	25	55.	Դոդս	77
9.	Տավոռիկ	25	56.	Գայ	77

10.	Վանանդ	25	57.	Գրիբոյեդով	77
11.	Կողբավան	25	58.	Ապագա	77
12.	Քարակերտ	25	59.	Առատաշեն	77
13.	Երվանդաշատ	25	60.	Ակնալիճ	25
14.	Մյասնիկյան	25	61.	Ակնաշեն	77
15.	Շենիկ	25	62.	Արևաշատ	77
16.	Բերքաշատ	77	63.	Արագած	25
17.	Բամբակաշատ	77	64.	Արաքս (Էջմ. շրջ.)	77
18.	Գետաշեն	77	65.	Արտիմետ	77
19.	Չարթոնք	77	66.	Արշալույս	25
20.	Արևիկ	77	67.	Աղավնատուն	25
21.	Արգավանդ	77	68.	Ամբերդ	25
22.	Արագափ	77	69.	Այգեկ	25
23.	Արաքս (Արմ. շրջ.)	25	70.	Այգեշատ (Էջմ. շրջ.)	25
24.	Արտաշար	77	71.	Ոսկեհատ	77
25.	Արմավիր	77	72.	Ջրառատ	77
26.	Այգեշատ (Արմ. շրջ.)	77	73.	Ջրառատի թ/Ֆ	77
27.	Ամասիա	77	74.	Պտղունք	25
28.	Ջանֆիղա	77	75.	Հայթաղ	25
29.	Ջրաշեն	77	76.	Հայկաշեն	77
30.	Հացիկ	77	77.	Հովտամեջ	77
31.	Հայկավան	77	78.	Լեռնամերձ	25
32.	Հոկտեմբեր	77	79.	Սամաղար	77
33.	Լենուղի	25	80.	Խորունք	77
34.	Խանջյան	25	81.	Լուսազյուղ	77
35.	Սովետական	77	82.	Տարոնիկ	77
36.	Լուկաշին	25	83.	Ծաղկալանջ	25
37.	Վարդանաշեն	77	84.	Ծաղկունք	77
38.	Տանձուտ	77	85.	Ծիածան	77
39.	Ձերժինսկի	25	86.	Մեծամոր	77
40.	Մարգարա	77	87.	Մերձավան	25
41.	Մայիսյան	25	88.	Փարաքար	25
42.	Մրգաշատ	77	89.	Մուսալեռ	77
43.	Երասխահուն	77	90.	Մրգաստան	77
44.	Եղեգնուտ	77	91.	Շահումյան	25
45.	Փշատավան	77	92.	Շահումյանի թ/Ֆ	25
46.	Շենավան	77	93.	Ֆերիկ	25
47.	Նալբանդյան	77	94.	Նորակերտ	25

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱՎՈՐԹՅԱՆ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ
ՎԱՃԱՌԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)	N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)
1.	Դսեղ	76	54.	Ուռուտ	86
2.	Աթան	76	55.	Ուրասար	86
3.	Արևածագ	76	56.	Հոբարձի	72
4.	Արդվի	76	57.	Հովնանաձոր	86
5.	Ահնիձոր	76	58.	Լեջան	86
6.	Այգեհատ	76	59.	Լոռի բերդ	86
7.	Աքորի	68	60.	Սվերդլով	86
8.	Թեղուտ	68	61.	Կաթնաղբյուր	86
9.	Զիլիգա	76	62.	Վարդաբլուր	72
10.	Չկալով	76	63.	Կողես	86
11.	Հազվի	68	64.	Կուրթան	72
12.	Հաղպատ	68	65.	Յաղդան	86
13.	Լորուտ	76	66.	Բլազողարնույե	86

14.	Կաճաճկուտ	76	67.	Դաշտադեմ	86
15.	Ծաթեր	76	68.	Ապավեն	86
16.	Կարմիր Աղեկ	76	69.	Արծնի	86
17.	Ծաղկաշատ	76	70.	Պետրովկա	86
18.	Մեծ Այրում	68	71.	Պաղաղբյուր	86
19.	Քարինջ	76	72.	Պրիվոլնոյե	86
20.	Քարկոփ	68	73.	Լեռնահովիտ	86
21.	Մարց	76	74.	Սարատովկա	86
22.	Ճոճկան	68	75.	Սարչապետ	86
23.	Մղարթ	76	76.	Կաթնառատ	86
24.	Շամուտ	76	77.	Մեղովկա	86
25.	Շևող	68	78.	Մեծավան	86
26.	Լեղոց	68	79.	Մեղվահովիտ	86
27.	Օձուն	68	80.	Ձորամուտ	86
28.	Գեղասար	44	81.	Միխայելովկա	86
29.	Գոգարան	44	82.	Ձյունաշող	86
30.	Արևաշող	44	83.	Նովոսելցեվո	86
31.	Ջրաշեն	44	84.	Նորաշեն	86
32.	Հարթագյուղ	44	85.	Բագում	72
33.	Լեռնավան	44	86.	Դեբետ	72
34.	Լեռնանցք	44	87.	Դարպաս	72
35.	Սարալանջ	44	88.	Գազանաբուծ	72
36.	Սարահարթ	44	89.	Գուգարք	62
37.	Սարամեջ	44	90.	Ազնվածոր	72
38.	Լուսաղբյուր	44	91.	Արջուտ	72
39.	Խնկոյան	44	92.	Անտառամուտ	72
40.	Կաթնաջուր	44	93.	Հալավար	72
41.	Ծաղկաբեր	44	94.	Լեռնապատ	72
42.	Մեծ Պառնի	44	95.	Լերմոստովո	72
43.	Քարածոր	72	96.	Վահագնածոր	72
44.	Ղուրսալ	72	97.	Վահագնի	72
45.	Շենավան	44	98.	Մարգահովիտ	72
46.	Շիրակամուտ	44	99.	Քարաբերդ	72
47.	Նոր Խաչակապ	72	100.	Փամբակ	72
48.	Բովածոր	86	101.	Ձորագետ	12
49.	Գարգառ	72	102.	Ձորագյուղ	72
50.	Գյուլագարակ	72	103.	Եղեգնուտ	72
51.	Ագարակ	86	104.	Շահումյան	72
52.	Ամրակից	86	105.	Ֆիոլետովո	72
53.	Պուշկինո	72			

ԿՈՏԱՅԵՒ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՍ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԼՇԱՆԱՎՈՒԹՅԱՆ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ

N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)	N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)
1.	Բալահովիտ	25	31.	Ալափարս	25
2.	Գեղաղիր	25	32.	Արգական	33
3.	Գեղարդ	33	33.	Կարենիս	25
4.	Գեղաշեն	25	34.	Ֆանտան	55
5.	Գառնի	25	35.	Բջնի	25
6.	Գողթ	25	36.	Արտավազ	55
7.	Չառ	33	37.	Աղավաճոր	53
8.	Չովաշեն	33	38.	Ջրառատ	55
9.	Չովք	25	39.	Հանքավան	53
10.	Առինջ	25	40.	Լեռնանիստ	55
11.	Ակունք	25	41.	Սոլակ	55
12.	Արգնի	500	42.	Արտավաճոր	53

14.	Ջրաբեր	33	44.	Քաղսի	55
15.	Ջրվեժ	25	45.	Բուժական	33
16.	Պտղնի	25	46.	Գետամեջ	25
17.	Ողջաբերդ	25	47.	Չովունի	25
18.	Հատիս	33	48.	Չորավան	33
19.	Հացավան	25	49.	Արգել	25
20.	Սևաբերդ	33	50.	Արագյուղ	33
21.	Ռադիոկ-ն կից գյուղ	25	51.	Թեղենիք	25
22.	Վերին Պտղնի	25	52.	Պռոշյան	25
23.	Կապուտան	25	53.	Սարալանջ	33
24.	Կաթնաղբյուր	25	54.	Քասախ	25
25.	Կամարիս	25	55.	Քարաշամբ	25
26.	Կոտայք	25	56.	Քանաքեռավան	25
27.	Մայակովսկի	25	57.	Մրգաշեն	25
28.	Ձորաղբյուր	25	58.	Նոր Գեղի	25
29.	Նոր գյուղ	25	59.	Նոր Արտամետ	25
30.	Նուռնուս	25	60.	Նոր Երզնկա	25

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԿԱՍ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱՎՈՐԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՎԱՑՎԱԾ
ՀՈՂԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌԹԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ**

N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)	N	Գյուղական համայնքներ	Կադաստրային գները (դրամ/քմ)
1.	Բենիամին	44	59.	Գոգհովիտ	48
2.	Բայանդուր	44	60.	Չույգաղբյուր	48
3.	Գետք	44	61.	Արփենի	48
4.	Ագատան	44	62.	Աշոցք	25
5.	Առափի	44	63.	Թավշուտ	48
6.	Ախուրիկ	44	64.	Թորոսգյուղ	48
7.	Ախուրյան	125	65.	Հարթաշեն	48
8.	Արևիկ	44	66.	Լեռնագյուղ	48
9.	Այգեբաց	44	67.	Սալուտ	48
10.	Ջաջուռ	44	68.	Սարագյուղ	48
11.	Ջաջուռ կայարան	44	69.	Սարապատ	48
12.	Ոսկեհասկ	44	70.	Սիգավետ	48
